

ընդ նորա նախադասութեան մէջ ընդ-ը դրուած է փոխանակ բառի տեղ, ուստի պէտք է հասկանալ՝ եւ քաղաւորեաց փոխանակ նորա: Տացես ընդ իմ եւ ընդ քոյ նախադասութեան մէջ ընդ-երը դրուած են վասն բառի փոխարէն, ուստի նախադասութիւնը կարող ենք արտայայտել նաեւ այսպէս. տացես վասն իմ եւ վասն քոյ:

Նոյն ընդ-ը երբեմն էլ դրուում է հետ եւ առ բառերի փոխարէն եւ պահանջում է յերջանումով տրական. օրինակ՝ Զի Աստուած ընդ մեզ է նախադասութիւնը կարելի է արտայայտել եւ այսպէս՝ «Զի Աստուած մեզ հետ է»: Նոյն կերպ՝ Ընդ քեզ է սկիզբն աւուրց նախադասութիւնը կարելի է արտայայտել այսպէս՝ Առ քեզ է սկիզբն աւուրց:

(Շար. 6)

ՅԱԿՈԲ Մ. ՄԵԽԹԱՐԵԱՆ
(Աւագ Դասախօս, Երեւան)

77. ԱՇ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ, Գրաբարի ձեռնարկ, Երեւան, 1958, էջ 283:



IMRE MADÁCH

ՄԱՐԴՈՒՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ

(Շար. տե'ս «Բազմավէպ» 1967, ք. 6-8, էջ 166)

ՏԵՍԻԼ Ե.

Արեւմտի մէջ: Հրապարակ մը՝ մէջտեղը ճառախօսներու բեմով: Հրապարակի առջեւի մասին վրայ, կողմնակի, տաճարի մը բաց գաւիթը՝ աստուածներու արձաններով, ծաղիկներու դրասանով եւ բազինով: Եւ իբր լուկիա՝ Միլտիադէս գորավարին կիմը, իր կիմոն գաւակին եւ խումբ մը աղախիններու ընկերակցութեամբ գոհի նուէրներ բերելով դէպի տաճար կու գայ: Հրապարակին վրայ սինլֆոր ամբոյս մը կը դեգերի: Արեւշտ առաւօտ է:

Ե Ի Ա.

Այս կողմ, որդեակ, դէպի այս կողմ, սիրելիս,
Հայրդ այն կողմէն, արագընթաց նաւով, տես,
Գնաց հեռու, հայրենիքի սահմանին
Պատերազմի ժողովուրդի մը դէմ բերտ,
Որ լրբենի յանդգնութեամբ կը սպառնայ՝
Հայրենիքին ազատութիւնն ընդոտնել:
Օ'ն, աղօթենք, որդեակ սիրուն, աղերսենք,
Երկինքը որ հանդիսանայ թեւ թիկունք՝
Հայրենիքի իրաւունքին սրբազան,
Եւ կրկին ողջ հայրըդ հերոս տուն բերէ:

ԿԻՄՈՆ

Սակայն ինչո՞ւ հայրըս այնքան հեռու դնաց,
Պաշտպանելու այս վատ ամբոյսն ապրիկար,
Մինչ տիրութեամբ կիմն իր սիրուն կը հիւծի:

Ե Ի Ա.

Վա՛յ, մի՛ դատեր քաջազուն հայրդ, ո՛վ տղաս,
Սնէ՞ք երկնի կ'իջնէ նրման զաւակին վրայ:
Իրաւունքն է լոկ կողակցին սիրական՝

Իր ամուսնին մեծ քայլերուն վրայ ողբալ,
Զոր թէ չառնէր՝ սակայն պիտի ամչնար:
Հայրըդ դործեց՝ ինչպէս մարդու մը պարտքն էր:

ԿԻՄՈՆ

Կը վախնաս, մա՛յր, տըկար ըլլայ եւ պարտուի:

Ե Ի Ա

Ո՛չ, ո՛չ, տըղաս, ան հերոս է, պիտ'յաղթէ.
Բան մը կայ լուկ, որուն համար կը խիթամ.
Թէ չկարենայ յաղթել անձին:

ԿԻՄՈՆ

Եւ ի՞նչպէս:

Ե Ի Ա

Ձայն մը հըզօր ունի հողին, փառքի տենչ.
Որ ըստրուկին մէջ ալ դադտուկ կը ննջէ,
Կամ թէ անոր դործի անձուկ ծիրին մէջ՝
Կ'իջնէ մինչեւ ստորնութեան ոճիրի:
Բայց դիեցած աղատութեան արիւնով՝
Կը բարձրանայ հերոսութեան քաղքենի:
Փառքի տենչն է ծընող ամէն դործի վեհ,
Ու գեղեցկի. սակայն եթէ չափն անցնի՝
Կը մաքառի իր ծնողին դէմ անդամ,
Մինչեւ իյնայ մէկն իրենցմէ արնաքամ.
Եթէ տենչն այս իր հողույն վրայ բռնանայ,
Եթէ դառնայ Հայրենիքի դաւաճան՝
Անէ՛ծք անոր: Ո՛հ, աղօթենք մենք, որդեակ:

(Կը մտնեն տանարին գաւիքը, մինչ այս՝ հրապարակին վրայ միշտ աւելի
բազմութիւն կը հաւաքուի):

ԱՌԱՋԻՆԸ ԱՄԲՈՒՆԷՆ

Մեզ չի հասնիր ըզգայացունց ոչ մէկ լուր.
Կարծես ոսոխ գըտած չըլլան մեր գունդեր:

ԵՐԿՐՈՐԴԸ ԱՄԲՈՒՆԷՆ

Եւ հոս թմրած եւ քնոտ է ամէն մարդ,
Ոչ ոք այլեւս ծըրադիրներ կը հիւսէ,
Ինչպէս երբեմն, որոնց համար հարկ ըլլայ՝
Ձայնը վըսեմ ժողովուրդին գերիշխան:
Ես առտընէ կը թափառիմ արդէն հոս,
Բայց քրէիս գնորդ մ'անգամ չըզըտայ:

ԱՌԱՋԻՆԸ ԱՄԲՈՒՆԷՆ

Ձանձրանալի՛ կեանք, ընելիք բան չըկայ:

ԵՐԿՐՈՐԴԸ ԱՄԲՈՒՆԷՆ

Վընաս պիտի չընէր շրթիթ մը թեթեւ:

(Մինչ այս, Եւս բագինին կրակը կը վառէ, ձեռքերը լուալով՝ նուէրները
գոհելու կը պատրաստուի: Իր աղախները ձօնի երգը կը սկսին, որ տուն
առ տուն կը խառնուի յաջորդ գործողութեան հետ: Հրապարակը կը լեցուի
փաղափայտներով եւ ռամիկով. երկու ամբոյսավարներ կը պայքարին իրարու
դէմ՝ բեմը գրաւելու համար):

ԱՌԱՋԻՆ ԱՄԲՈՒՆԱՎԱՐ

Մէկդի՛, այս բեմն ինձ համար է հարկաւոր:
Հայրենիքն է վտանգի մէջ թէ լռեմ:

ԵՐԿՐՈՐԴ ԱՄԲՈՒՆԱՎԱՐ

Եթէ խօսիս՝ կը վըտանգուի: Վա՛ր, վարձկան:
(Ռամիկը կը ծիծաղի եւ կը ծափահարէ):

ԱՌԱՋԻՆ ԱՄԲՈՒՆԱՎԱՐ

Դուն վարձկան չես, ըզքեզ ոչ ոք կը գընէ:
Քաղաքացի՛ք, ցաւով կ'առնեմ հիմա խօսք.
Խոնարհեցնել մեծ մը հողին ու ցեխին՝
Աղնուական սրտերու ցաւ է ու վիշտ:
Ու մարդ մը մեծ պէտք է քաշեմ ես դատի
Փառքի դահէն:

ԵՐԿՐՈՐԴ ԱՄԲՈՒՆԱՎԱՐ

Լաւ ըսկըսար, նենգաւոր:
Ծաղիկներով քու կենդանիդ զարդարէ՛
Զոր զոհելու սահմանած ես:

ԱՌԱՋԻՆ ԱՄԲՈՒՆԱՎԱՐ

Մէկդի՛ դուն:

ԱՄԲՈՒՆԷՆ ՄԷՋԷՆ

Այս ծաղրողին ինչո՞ւ ահանջ կը կախենք:
(Երկրորդ ամբոյսավարը կը սկսին փաշշել):

ԱՌԱՋԻՆ ԱՄԲՈՒՆԱՎԱՐ

Պիտի խօսիմ՝ սիրաբան ուրբան ալ ցաւի,
 Զի քեզ, վըսեմ եւ փառաւոր ժողովուրդ,
 Զօրավարէդ ալ դերադոյն կը դասեմ:

ԵՐԿՐՈՐԴ ԱՄԲՈՒՆԱՎԱՐ

Ի՞նչ, դաւաճան եւ անօթի խուժա՞նն այս,
 Որ շան մը պէս իր տէրերու սեղանէն
 Ինկած փշրանք մը կը փնտռէ: — Ո՛վ դու վատ,
 Քու ճաշակիդ չեմ նախանձիր ես բընաւ:

ԱՄԲՈՒՆ ՄԷՋԷՆ

Անկցի՛ առ ալ, մատնիչ մըն է, թող անկցի՛:

(Դեռ աւելի կը նեղեն: Իսկ Եւա աղաւնի եւ խունկ կը գոհէ բագինին վրայ):

Ե Ի Ա

Ափրողիտէ՛, ո՛վ դիցուհի, ընդունէ՛
 Ծուխն այս դոհին, խնդրեմ, լըսէ՛ աղօթքիս.
 Ամուսինիս գլխուն դափնի չեմ խնդրեր,
 Այլ սրտին քաջ՝ ընտանեկան անդորր լուկ:

(Զոհին ծուխին մէջէն Սէրը կ'երեւի ժպտերես՝ շրջապատուած Շնորհաբան-
 րէն, որոնք վարդ կը սփռեն վրան: Խումբը աղօթքի մէջ խորասուզուած է):

ԱՂԱԽԻՆՆԵՐԸ

Լսէ՛ իրեն:

ՍԷՐԸ

Ո՛վ կին, ամբիժ սրտերու
 Օրհնէքը վրադ:

ՇՆՈՐՀՔՆԵՐԸ

Եւ Շնորհքներու հովանին:

ԱՂԱԽԻՆՆԵՐԸ

Ափրողիտէ՛, քեզի կ'երգենք դոհութիւն:

ԱՌԱՋԻՆ ԱՄԲՈՒՆԱՎԱՐ

Կ'ամբաստանեմ Միլոիադէսն, ո՛վ ամբոխ,
 Թէ Հայրենիքն ան վաճարեց:

ԵՐԿՐՈՐԴ ԱՄԲՈՒՆԱՎԱՐ

Սո՛ւտ է, սո՛ւտ:

Մըտիկ ըրէք, եթէ յետոյ չէք ուղեր
 Ամօթազին զղջալ:

ԱՌԱՋԻՆ ԱՄԲՈՒՆԷՆ

Վա՛ր, վա՛ր, աներես:

(Կը քաշփշեմ ամբոխին մէջ):

ԱՌԱՋԻՆ ԱՄԲՈՒՆԱՎԱՐ

Զեռքին մէջն են սլարմանիներ քու ծաղիկ,
 Մէկ հարուածով կըցաւ Լեմնոսը դրաւել,
 Փարոսի քով արդէ կը յամէ: Ծախուած է:

ԵՐԿՐՈՐԴ ԱՄԲՈՒՆԷՆ

Մա՛հ իրեն, մա՛հ:

ԱՌԱՋԻՆ ՔԱՂԱՔԱՑԻՆ

Հէ՛յ, սլուացէ՛ք, կամ թէ ոչ՝

Անմիջապէս կորսուեցէք տունէս դուրս:

(Զոհը կ'աւարտի, աստուածները կ'աներեւութանան):

Ե Ի Ա

(Ոտի ելլելով)

Երթա՛նք, տեսնե՛նք, որդեակ, այս ի՞նչ աղմուկ է:

ԿԻՄՈՆ

Մատնիչ մըն է՝ զոր կը դատեն հոն, մայրիկ:

Ե Ի Ա

(Գաւիթի աստիճաններէն վար իջնելով)

Երբ անօթի ուսմիկն դատուած կը տեսնեմ
 Աւաղանին, սիրտս ու հոգիս կը ճմլի:
 Աստղը եթէ դահալիթի ցեխին մէջ՝
 Ուրախութեամբ եւ լուսանքով կը դիտէ
 Խուժանը դայն. եւ կը կարծէ թէ այսպէս
 Արդարացած պիտի ըլլայ իր կեղտն ալ:

ԵՐԿՐՈՐԴ ԱՄԲՈՒՆԷՆ

Պոռալ կ'ուղեմ, ձայնըս, տէր իմ, խռպոտ է:

ԵՐԿՐՈՐԴ ՔԱՂԱՔԱՑԻՆ

Ա՛ռ սա, դնա՛, կոկորդըդ լաւ մը օծէ:

ԵՐԿՐՈՐԴԸ ԱՄԲՈՒՆԵՆ

Եւ ի՞նչ պոռամ:

ԵՐԿՐՈՐԴ ՔԱՂԱՔԱՑԻՆ

Ուժդին պոռա՛ թէ, մեռնի՛:

ԱՄԲՈՒՆ ՄԷՋԵՆ

Մեռնի՛, մեռնի՛:

Ե Ի Ա

Պօսքը որո՞ւ մասին է:

ԵՐԿՐՈՐԴ ԱՄԲՈՒՆԱՎԱՐ

(Իրեն մօտեցաւ)

Որո՞ւ մասին. այն զոր դիտեն թէ բարձր է
Գլուխ մ'իւրենցմէ, ուստի տանիլ չեն կրնար:

Ե Ի Ա

Միլտիադի՞ մասին է: — Ո՛վ, անմահ դիք:
Դուն, ծեր Կրիսպոս, քեզ ամուսինս է փրկեր
Սարկութենէդ, արդ դո՞ւն ալ մահ կ'որոտաս:

ԿՐԻՍՊՈՍ

Ներէ՛, տիկին. բայց երկուքէս մէկը լող
Կրնայ ապրիլ: Այն որ պոռալ հրամայեց
Ձիւ կը պահէ եւ զաւակներս իմ երեք:

Ե Ի Ա

Վա՛յ քեզ, Կրիսպոս, ըստորնացած՝ սեւ բախտէդ:
Բայց կը ներեմ՝ թէ անօթի ես իրօք:
Իսկ դուն, Թերսիտ. եւ դուք ամէնքդ, ամէնքդ ալ,
Որ կը ներհէք բարեքներու մէջ հանգիստ,
Որովհետեւ այրըս վանեց թշնամին
Ձեր դռներէն: — Ապերախտ էք ամէնքդ ալ:

ԹԵՐՍԻՏԷՍ

Թէեւ ես չատ, չատ կը ցաւիմ, ա՛խ, տիկին.
Բայց ի՞նչ ընենք, Ժողովուրդին ձայնն է սա:

Իր ըստացուածքն ո՞վ վըտանդի կ'ենթարկէ,
Դիմադրելով ալիքներու ամեհի:

ԱՌԱՋԻՆ ԱՄԲՈՒՆԱՎԱՐ

Ժողովուրդին վըճիռն, ահա իմացէ՛ք:

(Արուսեակ իբր ռազմիկ, գաբիւրած դէմքով ու վազելով կու գայ):

ԱՐՈՒՍԵԱԿ

Բօթ կը դուժեմ. դրան առջեւն է թշնամին:

ԱՌԱՋԻՆ ԱՄԲՈՒՆԱՎԱՐ

Անկարելի՛. մեր յաղթական զօրավարն
Անոնց դէմ չէ՞:

ԱՐՈՒՍԵԱԿ

Եւ ճիշտ ինքն է թշնամին:
Թէ ի՞նչ կ'եփի իրեն դէմ հոս, իմացաւ,
Արդար ցասումն արթնցաւ իր սրտին մէջ,
Մինչ կը վիճէք՝ հրով-սրով կը հասնի:

ԵՐԿՐՈՐԴ ԱՄԲՈՒՆԱՎԱՐ

Դո՛ւք էք պատճառ այս ամէնուն, մատնիչներ:

ԱՄԲՈՒՆ ՄԷՋԵՆ

Անկցի՛ն: — Կեցցէ՛ մեր զօրավարն: — Վա՛յ մեղի:
Ով կարող է, օ՛ն թող փախչի: — Վերջացա՛նք:

ԱՌԱՋԻՆ ԱՄԲՈՒՆԱՎԱՐ

Ո՛չ, այլ երթանք խոնարհելու ընդառաջ:

Ե Ի Ա

Ո՛վ աստուածներ, որքան վիշտ էր ինձ վըճիռն՝
Որով եղար, ամուսին իմ, դատապարտ.
Ա՛խ, բայց դառն է, շատ աւելի, որ դուն զայն
Հաստատեցիր: Թէեւ դարձեալ տուն եկար:

ԱՌԱՋԻՆ ԱՄԲՈՒՆ

Կինը բռնե՛նք. թէ քաղաքնիս վնասուի՝
Թող նէ մեռնի, զաւակին հետ միասին:

Ե Ի Ա

Կը մեռնէի՛ր, այր իմ, սիրով քեզ համար,
Եթէ անէծքն Հայրենիքին՝ դաւակիրս
Գլխուն չիջնէր:

ԿԻՄՈՆ

Մա՛յր, ինձ համար մի՛ վախճար.
Եկո՛ւր, եկո՛ւր, ըզմեզ պիտի պաշտպանէ
Այս սրբավայր՝ ամէն տեսակ վրտանդէ:

(Հալածողներու առջեւէն՝ տանարին գաւիթը կ'ապաւինին. երկու Զրանոյշ-
ներ՝ վարդէ շղթայ մը կ'իջեցնեն իրենց ետեւէն՝ ժողովուրդին առջեւ, որ
անմիջապէս ետ կ'ընկրկի: Դուրսէն շեփորի ձայներ կը լսուին, ամբոյսը ճշա-
ւով կը փախչի: Զրանոյշները կ'աներեւութանան):

ԱՐՈՒՍԵԱԿ

(Քրքչալով ձեռքերը կը շփէ)

Աղուոր կատակ: Մտքին համար ի՞նչ լաւ է
Ծիծաղիլ հոն՝ սրտերը ուր կը պատռին:

(Գէպի տանար դառնալով)

Միայն անվերջ չխանդարէր զիս տեսիլն
Մշտապէս, յաւերժօրէն նորոգուող:
Կը մսիմ ես իր ոլորտին մէջ օտար,
Որ կը դարձնէ հոլանին ալ ողջախոհ,
Մեղքը՝ աղնիւ, ճակատադէրը՝ վրսեմ,
Իր վարդերով եւ համբոյրով պարզունակ:
Բայց իմ աշխարհս ինչո՞ւ աշտան կ'ուշանայ,
Ցնորքներով սարսափելի, ալիւնդակ,
Հալածելու անըջային պատրանքն այս,
Որ կը կանգնէ ամէն անգամ մարդը՝ երբ
Իր պայքարին մէջ իյնալու մօտ ըլլայ:
Պիտի տեսնենք սակայն սարսուռը մահուան,
Երբոր հասնի քիչ ատենէն հոս մեղի,
Այս տաղտկալի ըստուերական խաղերուն
Պիտի չըլլա՞յ արդեօք վաղման վարագոյր:

(Աղաւձ իբր Միլտիադէս՝ վիրաւորուած կ'առաջնորդուի, զինուած գունդի
մը գլուխ անցած: Ամբոյսն ու ամբոյսավարները առջեւը կ'իյնան պաղատագին):

ԱՄԲՈՒՆ ՄԵՋԷՆ

Կեա՛յ, զօրավար: — Գըթա՛ մեղի, բարերար:

ԱԴԱՄ

Ի՞նչ մեղք ունիք, որուն համար կ'աղաչէք:
Իսկ տըկարէն՝ հըզօրը ի՞նչ կը խնդրէ:

Բայց ո՛չ որդիս կու գայ, ո՛չ կինս՝ ընդառաջ:
Վընաս մ'արդեօք իրենց գլխուն չէ եկած:

Ե Ի Ա

Ինչո՞ւ կու գաս, թէ կինդ անգամ, Միլտիադ,
Չ'ուրախանար քու գալուստովդ: — Ո՛հ, որդեակ,
Բռնէ՛, բռնէ՛, կը գըլորի մայրըդ, տե՛ս:
Լաւ անուն մ'իսկ չես ժառանգած քու հօրմէդ:

ԱԴԱՄ

Չեմ հասկընար. ի՞նչ կայ, կինն իմ կ'անիծէ,
Անգին ամբոյն աղերսադին, կուրծքըս մինչ
Հայրենիքի համար ահա կ'արիւնի:

Ե Ի Ա

Բայց Հայրենիքն ու իմ հողիս՝ աւելի:
Ինչո՞ւ կու գաս գըլուխ անցած բանակիդ:

ԱԴԱՄ

Աստիճանիս՝ շուք մը նըման չէ՞ր վայլեր:
Եկայ՝ քանի իմ վէրքըս խոր չէր թողուր
Որ պաշտօնիս գըլուխ մընամ տակաւին:
Եկայ՝ որ զիս գրկող վրսեմ ամբոյն
Չեռքերուն մէջ իշխանութիւնս դնելով՝
Իմ գործերուս մասին իրեն հաշիւ տամ:
Զինակիցնե՛ր, ահա ըզմեզ կ'արձակեմ,
Արժանի էք ձեր ակութի հանգըստին:
Սուրս ալ Քեղի, ո՛հ Պալլասեան Աթենաս,
Կը նըւիրեմ՝ բազինիդ վրայ կախելով:

(Ինքզինքը վար առաջնորդել կու տայ՝ գաւիթի աստիճաններէն: Իսկ զին-
ւորները կը ցրուին):

Ե Ի Ա

Ա՛խ, Միլտիադ, աղնուական մեծողի.
Երջանկադոյն կին մը ո՞ւր կայ ինծմէ՞ դատ:
Զաւակըդ տե՛ս, ո՛րքան քեղի է նըման,
Ո՛րքան մեծ է ու գեղեցիկ:

ԱԴԱՄ

Սիրելի՛ք:

ԿԻՄՈՆ

Քաջ գիտէի, հայրըս ինչ ուր ալ ընէ՛,
Լաւ կ'ընէ միշտ:

Ե Ի Ա

Կ'ամբըջընես զիս, որդեակ.
Կողակիցին պարտքն է գիտնալ զանիկա:

ԱԴԱՄ

Դուն նըւիրէ՛ քու հօրըդ սուրն, ո՛վ որդեակ:

ԿԻՄՈՆ

(Սուրը կախելով բագինին վրայ)

Ո՛վ գիցուհի, այս սուրը թանկ պահպանէ,
Մինչեւ այն օրն որ առնելու դամ քեզմէ:

Ե Ի Ա

Եւ մայրը թող այս կրկնակի նըւէրին՝
Խոնկը սըփռէ: Պալլա՛ս, նայէ՛ մեր վըրայ:

(Խուցկ կը սփռէ):

ԱՌԱՋԻՆ ԱՄԲՈՒՍԱՎԱՐ

(Բեմէն)

Ձէի՞ ըսեր թէ մատնիչ է, թէ Դարեհ
Ձինքն է գընած, իսկ վէրքն այն լոկ կեղծիք է,
Եւ ալ չ'ուզեր պատերազմիլ անոր դէմ:

ԱՄԲՈՒՍԻՆ ՄԷՋԷՆ

Թող մեռնի՛ ան:

ԱԴԱՄ

Ի՞նչ աղմուկ կայ դուրսը, հո՛ն:

Ե Ի Ա

Ա՛խ, Միլտիադ, սոսկալի խօսք կը շրջի,
Ամբոխն ըզբեզ դարձեալ մատնիչ կը կոչէ:

ԱԴԱՄ

Ծիծաղակա՛ն. կ'ամբաստանեն զիս մատնի՞չ,
Ձիս, որ դարձայ Մարաթոնէն յաղթական:

Ե Ի Ա

Աւա՛ղ, սակայն եղելութիւն մ'է տխուր:
Դարձիդ, նայէ՛, ինչ նենգ աշխարհ դուն զըտար:

ԱՌԱՋԻՆ ԱՄԲՈՒՍԱՎԱՐ

Ինչո՞ւ բռնել կը դանդաղիք:
(Ամբոխը տաճարին գաւիթը կը խուժէ, մէջերնին է նաեւ Արուսեակ):

Ե Ի Ա

Միլտիա՛դ.

Մի՛ շարժիր այս սրբավայրէն ապահով:
Բանակդ ինչո՞ւ ցրուեցիր դուն, եւ ինչո՞ւ
Մեղքի որջն այս կրակի ճարակ չըտըւիր:
Լոկ չղթայի է ջողերն այս արժանի,
Որ կը զգայ թէ դուն իրեն տէր ես ծնած,
Եւ գերազանց՝ քան թէ իրենք միասին.
Կը սպանեն՝ որ չըխոնարհին քու առջեւ:

ԱՌԱՋԻՆ ԱՄԲՈՒՍԱՎԱՐ

Մատնիչին կինն ի՛նչ կը խօսի, կը լըսէ՞ք:

Ե Ի Ա

Իրաւունքն է կնոջ պաշտպանել ամուսինն,
Երբ մեղաւոր անդամ ըլլայ. աւելի՛
Երբ իրեն պէս մաքուր մէկն է եւ վըսեմ,
Իսկ թշնամին՝ այլասերած, ձեզ նըման:

ԱՌԱՋԻՆ ԱՄԲՈՒՍԱՎԱՐ

Վըսեմ ամբոխ, ինչո՞ւ այսպէս քամահել
Կը թողուս քեզ:

ԱՌԱՋԻՆ ԱՄԲՈՒՍԻՆ

Գուցէ չիտակ կը խօսի:

ԱՌԱՋԻՆ ՔԱՂԱՔԱՑԻՆ

Համախոհն է կասկածելի: Պռռացէ՛ք,
Վատ ոգիներ, կամ անօթի սատկեցէ՛ք:

ԱՄԲՈՒՍԻՆ ՄԷՋԷՆ

Մա՛հ իրեն, մա՛հ:

ԱԴԱՄ

Ծածկէ աչքերն զաւակիս.
Թող չըտեսնէ արիւնս. — մէկդի դուն ալ, կին.
Ժայռին ինկող շանթը քեզի չըհասնի:
Մինակ մեռնիմ, — եւ դեռ ինչո՞ւ ապրիմ ես,
Աղատութիւնն երբ կը տեսնեմ թէ որքան

Անմիտ բան է, որուն համար խօլարար
Պայքարեցայ՝ ամբողջ կեանքիս ընթացքին:

ԱՌԱՋԻՆ ԱՄԲՈՒԱՎԱՐ

Ու դեռ ինչո՞ւ կը տատամսիք:

ԱՄԲՈՒՆ ՄԷՋԷՆ

Թող մեռնի՛:

ԱԴԱՄ

Ձեմ անիծեր ժողովուրդն այս վատասիրտ.
Յանցաւոր է, լոկ բընութիւնն է անոր՝
Որ դարձընէ թշուառութիւն զինք դերի.
Եւ դաւաճան ձեռքերու մէջ փառամոլ՝
Ըստըրկութեանն ըլլայ դործիք արիւնդուշտ:
Ե՛ս եմ յիմար, որ կարծեցի թէ այսպէս
Խուժանի մէջ ազատութիւն հարկաւոր:

ԱՐՈՒՍԵԱԿ

Տապանազիրդ յօրինեցիր: Ու յարմար
Շատ մը դալիք չիրիմներու փառաւոր:

ԱԴԱՄ

Վար տարէ՛ք զիս, ալ չեմ ուզեր օգտուիլ
Սրբավայրի ապաւէնէն:

(Ինքզինքը վար առաջնորդել կու տայ աստիճաններէն, մեղմօրէն դնելով
Եւան՝ նախնային բազուկներուն մէջ):

Պատրաստ եմ:

ԵՐԿՐՈՐԴ ԱՄԲՈՒԱՎԱՐ

Պաշտպանէ՛ քեզ, դեռ ամէն բան չէ կորած:

ԱԴԱՄ

Թէ ջատագով ըլլամ անձիս՝ վէրքըս չատ
Պիտի ցաւի:

ԵՐԿՐՈՐԴ ԱՄԲՈՒԱՎԱՐ

Ըրէ՛, չէ՞ որ այս ամբոխն
Առջեւդ ահա փռչին մէջ կը սողար:

ԱԴԱՄ

Անոր համար ճիշտ ամէն բան ի դուր է,
Նըւաստացման չի հանդուրժեր ժողովուրդն:

ԱՐՈՒՍԵԱԿ

Պատրանքներէդ ըսթափեցա՞ր:

ԱԴԱՄ

Եւ ի՞նչպէս:

ԱՐՈՒՍԵԱԿ

Ըմբռնեցի՞ր որ այն յիմար ամբոխին՝
Աղնուաղոյն տէրն էիր դուն՝ քան ան քեզ:

ԱԴԱՄ

Կրնայ ըլլալ, բայց երկուքին ճամբան ալ
Դէպի կորուստ կ'առաջնորդէ անխափան.
Տարբեր անուն, վախճանը միշտ նոյն բան է,
Եւ դիմադրել ունայն ճիւղ է. չեմ կռուիր:
Ինչո՞ւ, սակայն, սիրտը հրավառ կը դիմէ
Միշտ աւելի բարձրասլաց ոլորտներ:
Թող ինքնիրեն համար ապրի ու փնտռէ
Հաճոյքն՝ որով կարճ գոյութիւնն իր լեցնէ,
Եւ դանդաղուն, գինով դիմէ դէպ հանդէս: —
Առաջնորդէ՛ նոր ուղիէն, Արուսեակ,
Եւ քրքիչով պիտի դիտեմ ուրիշի
Առաքինի վարքն ու ցաւերն, ինձ համար
Լոկ գոհացում որոնելով եւ հաճոյք:
Իսկ դու, ո՞վ կին, որ ատենօք ինձ դարպաս
Անապատին մէջ կերտեցիր — կը թըլի —
Եթէ բաղձաս, որպէս ծընող պատուաւոր,
Կրթել որդիս քաղաքացի մը արդոյ,
Յիմար ես դուն, եւ արժանի ծաղրանքին
Բողանոցի շրպարագէմ պոռնրկին,
Որ միշտ արբելու, շրթնահամբոյր կը տենչայ:
Հրճուէ՛, վայլէ՛, եւ ուրացի՛ր սրբութիւնն:
Իսկ ինձ՝ պատիժ՝ երթալ ահա կառափնատ,
Ոչ թէ դրձուձ վատութիւն մը դործելուս,
Այլ զաղափար մը մեծ՝ սրտիս կըրելուս:

(Մինչ այս՝ կռնդ մը կը բերեն աստիճաններուն առջեւ, Արուսեակ քովը կը
կենայ սակրը ձեռքին մէջ: Ապա գլուխը կը խոնարհեցնէ):

ԱՌԱՋԻՆ ԱՄԲՈՒԱՎԱՐ

Գլխատեցէ՛ք: Կեցցէ՛, ուրեմն, Հայրենիք:

ԱՐՈՒՍԵԱԿ

(Կէս մը փափալով)

Ի՞նչ գեղեցիկ բարի-երթաս, այնպէս չէ՞: —
Կտրիճ տէր իմ, սարսուռ մը դուն չե՞ս ըզգար
Դժնետեսիլ մահուան հովէն ցրտաշունչ:

Ե Ի Ա

Աղօթքներու չունկնդրեցիր, ո՛վ Պալլաս:

(Տաճարէն վար դարձուած ջահով եւ պսակով՝ հեզադէմ երիտասարդի մը
կերպարանքի տակ, մահուան ոգին կը մօտենայ Ադամին):

ԱԴԱՄ

Պալլաս լըսեց քեզի: — Երկինքն օրհնէ՛ քեզ:
Խաղաղութիւն պատեց հողիս, ո՛վ Լուկիա:

ԱՐՈՒՍԵԱԿ

Անէ՛ծք քեզի, ցընորական սին աշխարհ,
Գեղեցկազոյն բոսէս. դարձեալ եղծեցիր:

Ե Ի Ա

Անէ՛ծք քեզի, ըստորոյի վատ ամբոխ:
Դաժանօրէն երջանկութեան դուն հըպար,
Իր թարմ ծաղիկն իսկոյն դետին թափելով:
Ազատութիւնն քաղցըր պիտի չըլլայ քեզ
Այնքան՝ որքան ինծի եղաւ ցաւատանջ:

(Շար. 5)

Հունգար բնագրէն
Բարգմանեց
Հ. Ա. Ֆ.

ՀԱՆԳԻՍ

ԶՈՅԳ ՎԱՍՏԱԿԱՒՈՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ



Հ. Ղեւոնդ Վրդ. Տայեան

Հ. Ղեւոնդ Վրդ. Տայեանի մահուան լու-
րը՝ մեր գէժքին ժպիտն յանկարծ սառե-
ցուց:

Հ. Ղեւոնդ վարդապետ ոչ եւս է:

Երէկ հոս էր մեզի հետ. իր աչքերուն
մէջ մանուկի թափանցիկ ժպիտը կը ցո-
լար: Իր բարութիւնը չափ չունէր. ոչ
մէկուն հանդէպ ոխ կը պահէր սրտին
մէջ. առաքինութեան բուրաստան մ'էր
իր հողին, որուն առաջին ծաղիկը, իր
ժպիտն էր մշտատեւ:

Աստուած օժտած էր զինքը զանազան
ձիրքերով, արծաթի պէս հնչուն ձայնով:
Իր երգը աղօթք էր, սրտազրաւ եւ յու-
զիչ: Երբ ինքը երգէր, մեր սիրտը ար-
ցունքով կը լեցուէր. ինքը, սակայն, մեզ
չէր տեսներ այդ պահուն. աչքերը միշտ
խորանին սեւեռած, հրեշտակներուն հետ
կ'երգէր:

Ազնիւ ու բարեհամբոյր էր ամէնուն
հետ, վաճիւր ապրելունը վրայ մեծ ար-
պարկութիւն կը դրժէր: Իր յիշատակը
զանձի պէս թաքուն կը մնայ ամէնու
սրտին մէջ: Թող մեր արցունքը ծաղիկի
իր հողակոյտին վրայ. երկինքի օրհնու-
թիւնը իջնէ եւ իր աճիւններուն լոյս սը-
փռէ: Վստահ ենք որ Աստուած իր վաս-
տակաւոր մշակը վարձատրած է արդէն,
անանց փառքի յաւիտենական լոյսով:

Այդ երանական լոյսին մէջ մեզ ալ յի-
շէ, ո՛վ լուսահողի վարդապետ, որպէս-
զի Մխիթարի այդին անձնանուէր յա-
ջորդներով միշտ ծաղիկի. ժպտէ նորէն
երկինքէն, ո՛վ անխոնջ մշակ, որպէս-

Մխիթարեան Մխարանութիւնը սուգի
արցունքով փակեց 1968 տարին: Երկու
վաստակաւոր Հայրեր, բաժնուցան յա-
ւէտ մեր բոյնէն:

Մեր մխարանական սուգին մասնակցե-
ցան զանազան բարձրաստիճան եկեղեցա-
կաններ, ազգայիններ, բարեկամներ ու
ծանօթներ, որոնք իրենց նամակներով,
հեռագիրներով ու մանաւանդ աղօթքնե-
րով՝ վարդի թերթեր սփռեցին մեր սղա-
ւոր սրտերուն: Շնորհակալութիւն՝ իրենց
անկեղծ զգացումներուն համար:

Սեպտեմբերի անոյշ արեւին տակ ծա-
ղիկ կը քաղէինք կանաչ դաշտերէն, երբ